

**ԿԵՍԱՐԻՈՅ ԱՌԱՋՆՈՐԴ ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ
ՊԱԼԵԱՆԻ ԿՐԹԱ-ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ
ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹԻՒՆԸ**

(ԺԹ. դարավերջ-Ի. դարասկիզբ)

ԿԱՐԻՆԷ ԱԻԵՏԵԱՆ (avetyan.karine1@gmail.com)

ՄՈՒՏՔ

Կեսարիան այն բնակավայրերից էր, որտեղ հայերն ապրում էին դեռևս Բիզանդական Կայսրության ժամանակներից: ԺԱ. դարում Հայաստանում սկսում մեծ արտագաղթի հետեւանքով Կեսարիա-Կապադովկիայում հայերի թիւն այնքան շատացաւ, որ փոխուեց ժողովրդագրական պատկերը եւ հայերն արդէն մեծամասնութիւն էին կազմում: Թուրքական տիրապետութեան սկզբնական շրջանում պահպանում էր այդ վիճակը, սակայն յետագայում դա խիստ անհանգստացնում էր իշխանութիւններին եւ նրանք պարբերաբար տեղահանութիւններով ու բռնագաղթերով մեծ թուով հայերի եւ յոյների հեռացրել էին իրենց մշտական բնակավայրերից եւ փոխարէնը մահմեդականներով բնակեցրել տարածքը: Այդ քաղաքականութիւնը շարունակուեց մինչեւ ԺԹ. դարի 90ականները¹, վերածուեց 1915ի Հայոց Ցեղասպանութեանը եւ 'յեղափոխական' քեմալականների օրով՝ էթնիկ միատարրութեան քաղաքականութեանը:

Տրդատ եպիսկոպոս Պալեանը որպէս թեմի առաջնորդ (1887-1910) իր գործունէութեան ընթացքում կարեւորագոյն տեղ է յատկացրել Կեսարիայում կրթութեան գործը կազմակերպելու եւ իրականացնելու իր ծրագրերին. ոչ միայն վերանորոգել-վերաբացել է Ս. Կարապետի վարժարանը, այլեւ հիմնաւորապէս զբաղուել իր առաջնորդական վիճակում կրթութեան գործով, զուգահեռ՝ ունեցել է գիտական բազմաթիւ հետաքրքրութիւններ, ուսումնասիրել է Կեսարիայի ձեռագրական, հնատիպ գրականութեան, վանքերի, բանահիւսութեան հարցերը:

Կեսարիան Օսմանեան Կայսրութեան հայաշատ բնակավայրերից էր, որտեղ հայերը հաստատուել էին դեռևս Բիզանդական Կայսրութեան ժամանակներից (Դ.Ե. դարեր), իսկ ԺԱ. դարում հայկական իշխանութիւնների անկումից յետոյ Հայաստանից սկսում մեծ արտագաղթի հետեւանքով հայ ազգաբնակչութեան աճը Կապադովկիա-Կեսարիայում փոխեց ժողովրդագրական պատկերը այնպէս, որ հայերն այնտեղ մեծամասնութիւն էին կազմում, եւ ինչպէս վկայում են աղբիւրները² արդէն

¹ ԺԹ. դարի կէսերին Կեսարիայի բնակչութեան մեծ մասը կազմում էին թուրքերը:

² Ն. Արոնց, «Կասիա միանձնուիին եւ հայերը», *Հանդէս ամսօրեայ*, 1901, էջ 129-132. Նաեւ՝ Ա. Ալաօյաճեան, *Պատմութիւն հայ Կեսարիոյ, տեղագրական, պատմ.*

«հայ» եւ «կապադովկիացի» համարժէք հասկացութիւններ էին, յամէնայն դէպս յոյները գերադասում էին երկրորդը՝ «հայ» էթնօնիմից խուսափելու համար: Դրանով է բացատրուում Կեսարիայում եւ շրջակայքում հայերէն ձեռագրերի, եկեղեցիների եւ վանքերի, մշակութային ու ճարտարապետական կառոյցների առատութիւնը³: Կեսարիան որպէս առաջնորդական վիճակ կազմաւորուել է դեռեւս ժԲ. դարում⁴:

Թուրքական տիրապետութեան սկզբնական շրջանում դեռեւս պահպանում էր այդ վիճակը, չնայած որ ժԵ.-ժԶ. դարերում արդէն իշխանութիւնները պարբերական տեղահանութիւններով եւ բռնազաղթերով մեծ թուով հայերի եւ յոյների հեռացրել էին իրենց մշտական բնակավայրերից եւ փոխարէնը մահմեդականներով բնակեցրել տարածքը: Միջնադարից սկիզբ առած այդ քաղաքականութիւնը, իր այլեւայլ միջոցներով (կողոպուտ, աւերում, հրկիզում, բռնի դաւանափոխութիւն, ցեղասպանութիւն էթնիկ միատարրութիւն) գործեց մինչեւ 1920ականները⁵:

մական եւ ազգագրական ուսումնասիրութիւն, հրր. Ա., Գահիրէ, 1937, էջ 389-390:

³ В. А. Арутюнова-Фиданян, Армяне-халкидониты на восточных границах Византийской империи (XI в.) (Վ. Յարութիւնովա-Ֆիդանեան, Հայ քաղկեդոնականները Բիզանդական Կայսրութեան արեւելեան սահմաններին ժԱ. դար), Հայպետհրատ, Երեւան, 1980, էջ 42-43: Օտար հետազօտողներից ժ. Լաֆոնտէն-Դոզոնը Կապադովկիայում, յատկապէս ժ.-ժԱ. դարերում, անշուշտ, նաեւ դրանից առաջ, հայերի մեծաքանակ ներկայութեամբ է բացատրում “Բրուտի եկեղեցու” (Չեմլեքչի քիլիսէ) օրինակով մի շարք եկեղեցիների կրած խիստ հայկական ազդեցութիւնը, որ արտայայտուած է ճարտարապետական լուծումների, որմնանկարների, դրանց աղաւաղուած յունարէն գրութիւնների մէջ՝ գրուած են ոչ յոյնի ձեռքով, այլ թերեւս դաւանափոխ-քաղկեդոնական հայի: Ուսումնասիրողը շատ ընդհանրութիւններ է գտնում եկեղեցու սրբապատկերների, որմնանկարների եւ հայկական մանրանկարչութեան միջեւ եւ նկատի ունենալով հայերի ներկայութեան պատմական իրողութիւնը, համարում է ոչ թէ սոսկ “ազդեցութիւն”, այլ աւելին՝ հայերի “ներկայութիւն” Կապադովկիայում (Ж. Лафонтен-Дозонь, “Росписи церкви, называемой Чемлекчи килисе, и проблема присутствия армян в Каппадокии” (Չեմլեքչի քիլիսէ կոչուած եկեղեցու որմնանկարները եւ հայերի ներկայութեան հարցը Կապադովկիայում, *Բիզանդիա, Հարաւային սլաւոններ եւ հին Ռուսիա, Արեւմտեան Եւրոպա, «Գիտութիւն»* հրատ., Մոսկուա, 1973, էջ 78-90:

⁴ Յիշատակում է 1178ին՝ Հոռմկլայի եկեղեցական ժողովի առիթով:

⁵ *Հայոց նոր վկաները*, աշխ. Յ. Մանանդեան եւ Հր. Աճառեան, Մայր Աթոռի տպարան, Վաղարշապատ, 1903:

Ծրագրուած եւ պարբերաբար կրկնուող այդ գործողութիւններով թուրքերին յաջողուեց փոխել ազգաբնակչութեան էթնիկ պատկերը յօգուտ մահմեդականների⁶:

ԿԵՍԱՐԻԱՅԻ ԹԵՄԻ ԱՌԱՋՆՈՐԴ ՏՐԴԱՏ ԵՊԻՍԿՈՊՈՍ ՊԱԼԵԱՆ

ԺԹ. դարի սկզբներից նկատուող հայկական զարթօնքը, մտաւոր աշխուժութիւնը տարածուել էր բնականաբար, նաեւ հոգեւոր դասի մէջ, որի ներկայացուցիչները (Ղեւոնդ վրդ. Փիրղալէմեան, Գարեգին վրդ. Սրուանձտեանց, Արիստակէս Տեկանց), սկսել էին գիտակցել ազգային հոգեւոր արժէքների կարեւորութիւնը, ձեռնամուխ լինելով դրանց յայտնաբերման, գրառման եւ հրատարակման աշխատանքներին: Տրդատ վարդապետ Պալեանը, որն իր ժամանակի մտաւորական հոգեւորականների յաջորդ սերնդից էր, կեսարահայերի կողմից 1887ին ընտրուել էր Կեսարիայի թեմի առաջնորդ: Ծնուել է 1850ին Կեսարիայի Թալաս գիւղում, նախնական կրթութիւնը ստացել ծննդավայրի Վարդ-Պատրիկեան դպրոցում, ապա՝ Զմիւռնիայի Մեսրոպեան վարժարանում: 1878ին մեկնել է Երուսաղէմ եւ որոշ ժամանակ աշխատելով վանական միջավայրում, 1881ին ձեռնադրուել սարկաւազ, 1882ին՝ վարդապետ: 1887-1910՝ եղել է Կեսարիայի առաջնորդ, 1899ին ստացել է ծայրագոնութեան աստիճան, ձեռնադրուել է եպիսկոպոս⁷:

Ընտրուելու առաջին իսկ օրից նրա գործունէութիւնը եղել է բազմաբնոյթ. երիտասարդ, եռանդով լի նորընտիր առաջնորդը ձեռնամուխ է լինում միաժամանակ բազմաթիւ դեռեւս չարուած եւ թերաւարտ գործերի: Պալեանը իր նախորդներից ժառանգել էր քայքայուած վանական տնտեսութիւն, պառակտուած ու վարկաբեկուած հոգեւոր դաս, որը հենց սկզբից էլ չէր թաքցնում իր անբարեացական վերաբերմունքն առաջնորդի հանդէպ, սակայն վերջինս չէր ընկրկում դժուարութիւնների առաջ եւ գործում էր առանց յուսահատուելու:

⁶ Վրացի ուղեգիր Գիորգի Ասալիշվիլին իր ճամփորդութեան ընթացքում (1819 Յունիս-1820 Յուլիս) Կեսարիայի մասին գրում է, որ հայերն այնտեղ ունեն 2000 տուն եւ երկու եկեղեցի, ընդգծելով միաժամանակ, որ «տեղացի քրիստոնեաները հազուադէպ գիտեն իրենց մայրենի լեզուն, խօսում են թաթարերէն (թուրքերէն) եւ անգամ հաղորդում են իրենց վարդապետերի հետ այդ լեզուով» (Պալէ Զոբանեան, *Վրացական ուղեգրութիւնները եւ նրանց տեղեկութիւնները հայերի մասին*, ՀՍՍՀ ԳԱ հրատ., Երեւան, 1981, էջ 112-13:

⁷ Տրդատ եպիսկոպոս Պալեանի կենսագրութեան մանրամասները եւ գործերի մատենագիտութիւնը տե՛ս՝ *Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ... Ժողովածոյի երկրորդ մասը՝ Կ. Աւետեան, «Կենսամատենագիտութիւն Տրդատ եպիսկոպոս Պալեանի», Քննասէր հրատ., Երեւան, 2002, էջ 181-246:*

Ս. ԿԱՐԱՊԵՏԻ ԺԱՌԱՆԳԱԴՈՐԱՅ ՎԱՐԺԱՐԱՆԻ ՎԵՐԱԲԱՑՈՒՄՆ ՈՒ ԳՈՐԾՈՒՆԵՌՈՒԹԻՒՆԸ

Նախաձեռնած առաջին գործը՝ 1784ից գոյություն ունեցող, սակայն անգործութեան եւ շատ անմխիթար վիճակի մատնուած վարժարանի վերաբացումն էր: Եւ քանի որ գաւառական ժողովը չէր ընդառաջել առաջնորդին, Պալեանն իր ունեցած անձնական միջոցներով ձեռնամուխ եղաւ այդ գործին, հիմնովին վերանորոգելով վարժարանը եւ գրադարանը, բարեկարգելով վանական տնտեսութիւնը եւ Կեսարիայի մերձակայ քաղաքների եւ գիւղերի դպրոցներից ընտրուած 16 աշակերտներով եւ միակ ուսուցիչ՝ Դանիէլ Նշանեանի ուղեկցութեամբ 1888 Մայիսին սկսուեցին Ս. Կարապետի ժառանգաւորաց վարժարանի դասերը: Ինչպէս յետագայում գրել են վարժարանի շրջանաւարտ սաները՝ «...Շար պարզ եւ անշուք սկզբնաւորութիւն մը ունեցող այս վարժարանը, տարիներ վերջ պիտի ըլլար Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց փարոսը»⁸: Առաջնորդի ջանքերի շնորհիւ էր, որ թրքախօս Կեսարիան աստիճանաբար դառնում էր հայախօս, հայագիր եւ ազգային ինքնագիտակցութեան զարթօնք էր ապրում: Վարժարանը նիւթական միջոցներով ապահովելու համար առաջնորդը, որ նաեւ տեսուչն էր, դիմել է Կ. Պոլսում եւ արտասահմանում գտնուող մեծահարուստ կեսարացի հայրենակիցների, որոնք պատրաստակամ իրենց աջակցութիւնն են յայտնել: Կարճ ժամանակ անց ոգեւորուելով ցուցաբերուած վերաբերմունքից, Պալեանը որոշում է իրականացնել իր մտադրութիւնը եւ նախապէս որպէս ժառանգաւորաց վարժարան բացուած դպրոցը 1893ին կրթութեան նախարարութիւնից ստանում է արտօնագիր, որով գիշերօթիկ վարժարանը ճանաչում է բարձրագոյն ազգային կրթական հաստատութիւն, միաժամանակ հեռատեսօրէն պահպանելով ժառանգաւորաց անունը: Կարգավիճակի այդ փոփոխութիւնից յետոյ Պալեանը կազմել եւ հրատարակել է վարժարանի ծրագիր-կանոնադրութիւնը⁹, որը պարբերաբար վերահրատարակուել է: Ծրագիրը, որ նրա հիմնած «Հրատարակչական միութիւն Ս. Կարապետի վանուց» անունով ընկերութեան հրատարակութիւնն է¹⁰, տեղեկացնում է, որ ուսման տեւողութիւնը եղել է

⁸ Հ. Ուղուրեան, Կ. Աբրահամեան, «Կեսարիոյ Ս. Կարապետի վանքը, բարձրագոյն վարժարանը եւ Տրդատ եպս. Պալեան. Կեսարիոյ առաջնորդական աթոռը եւ առաջնորդներ», *Ընդարձակ տարեցոյց*, տպագր. Յ. Մատթէոսեան, Պոլիս, 1928, էջ 237-38:

⁹ *Հիմնական կանոնք եւ ծրագիր ուսմանց ժառանգաւորաց Վարժարանի Ս. Կարապետի վանուց ի Կեսարիա, հաստատուեալ 1888, Մայիս 1, Գ. Պաղտատեան տպարան, Կ. Պոլիս, 1894, 42 էջ, (Գ. տիպ.՝ Մ. Մամուրեան տպարան, Իզմիր, 1897, 44 էջ):*

¹⁰ Յայտնի չէ՝ Ընկերութիւնը դասագրքեր հրատարակել է, թէ՞ ոչ, այդուհանդերձ, յայտնի է առնուազն երեք գրքոյկի անուն, որպէս «Հրատարակութիւն Կեսարիոյ Ս. Կարապետի վանուց ժառանգաւորաց» ընկերութեան հրատարակութիւն.- 1)

վեց տարի, դասաւանդուել են լեզուներ՝ հին եւ նոր հայերէն, ֆրանսերէն, թուրքերէն, բարոյագիտութիւն, տոմարակալութիւն (հանրահաշիւ), աշխարհագրութիւն, իրաւաբանութիւն, գծագրութիւն, երաժշտութիւն: Տրդատ եպիսկոպոսը դասաւանդել է կրօնագիտութիւն, պատմութիւն:

Առաջնորդն այն հոգեւորականներից էր, որ իր գործունէութեան մէջ մեծագոյն նշանակութիւն էր տալիս կրթական գործին: Նա ոչ միայն Ս. Կարապետի վարժարանի հիմնադիրն էր, այլեւ մշակել եւ իրականացնում էր կրթութեան միասնական համալիր ծրագիր Կեսարիայի ողջ նահանգում. «... Կեսարիոյ եւ համայն Փոքր Ասիոյ լոյսի փարոս մը, որ 27 տարիներ անդադար պիտի լուսաւորէր տգիտութեան խաւարին մէջ մնացող հայաբնակ վայրերը»¹¹: Ժամանակի ընթացքում Կեսարիայից եւ շրջակայքից գիշերօթիկ վարժարանում սովորողների թիւն արդէն այնքան էր մեծացել, որ նոր շէնքի կարիք էր զգացում, ինչն էլ իրականացում է, եւ 1903ի ուսումնական տարին կեսարացիները սկսում են հոյակապ նորակառոյց վարժարանի շէնքում: Նորակառոյց վարժարանի մասին Արեւելեան մամուլը հիացմունքով գրել է. «Կեսարիոյ բարեջան Առաջնորդ Գեր. Տրդատ Եպիս. Պալեան պատիւ ըրած է մեզ դրկելու Կեսարիոյ Ս. Կարապետի վանքին կից նորակառոյց վարժարանին լուսանկարը. սոյն կրթարանին շինութիւնը ասկից չորս-հինգ ամիս առաջ ամբողջովին աւարտած եւ անցեալ Հոկտեմբեր ամսոյ մէջ ալ ներքին կահաւորումը լրանալով՝ տեղափոխութիւնը կատարուած է նոյն ամսուն, եւ դասախօսութիւնք սկսած են բոլորովին նոր ծրագրով եւ նոր կարգադրութեամբ: Զերմապէս կը շնորհաւորենք Պալեան Սրբազանը այս գեղեցիկ յաջողութեան համար, որով Կեսարիոյ նման բազմահայ վիճակ մը կրցաւ օժտել կրթական հաստատութեամբ մը եւ այս՝ գլխաւորապէս շնորհիւ իր յարատեւող եւ կրթասէր ոգիին եւ մասամբ կեսարացի ազգայնոց փոյթեռանդն գործակցութեան»¹²: Այստեղ ուսանողները կրթութեան հետ միասին ստանում էին ոչ պակաս կարեւոր՝ դաստիարակութիւն, որ ձեւատրում էր ազգային աւանդութիւններին նախանձախնդիր գիտակցութեամբ օժտուած անհատներ, որոնք իրենց յետագայ գործունէութեամբ ապահովել են Ս. Կարապետի վարժարանի եւ նրա հիմնադիր Տ. Եպս. Պալեանի անունն ու բարի համ-

Յուցակ հայերէն ձեռագրաց ի Թուրքիա, Կ. Պոլիս, 1892, 2) Նշանագիրք հայոց, Վիեննա, 1898, 3) Հիմնական կանոնք եւ ծրագիր ուսմանց... 1894. վերջինը պարբերաբար վերահրատարակուել է եւ որ Հայաստանի գրադարաններում չկայ, միայն երկու՝ (1894՝ Ա) եւ (1897՝ Գ) հրատարակութիւնների նկարագրութիւնը տես՝ Ա. Ղազիկեան, Հայկական նոր մատենագիտութիւն եւ հանրագիտարան հայ կենսքի, Վենետիկ, 1909, էջ 1565:

¹¹ Վարդան Եպս. Տէմիրճեան, Դիմաստրոներ. ազգային եկեղեցական փոխարիներ, տպարան Արագ, Պէյրութ, 1983, էջ 161:

¹² «Լրաբաղ», Արեւելեան մամուլ, 1904, էջ 288. նաեւ՝ Տ. Ա., «Պատկերի մը առջեւ», Արեւելք, 2/15 Մարտ 1904, էջ 1:

բաւր: Վարժարանն աշխարհիկ ուղղութիւն ունէր, որ ծրագրուած էր Պալեանի կողմից: Շրջանաւարտների մեծ մասը նախընտրում էին մանկավարժութեան ասպարեզը, մանաւանդ որ հայաբնակ գաւառներում մեծ համարում ունէին Պալեանի վարժարանի սաները ու այդ ամբողջ ընթացքում յայտնի է, որ ընդամենը մէկ շրջանաւարտ է նուիրուել հոգեւոր բնագաւառին՝ ձեռնադրուել կուսակրօն վարդապետ: Իր գոյութեան 27 տարիների ընթացքում (1888-1915) վարժարանը տուել է 201 շրջանաւարտ:

ՊԱԼԵԱՆԻ ԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Առաջնորդի գիտական բազմազան եւ միաժամանակ շատ ընդգրկուն հետաքրքրութիւններն ի յայտ էին եկել շատ վաղուց: Իրեն յուզող հարցերի պատասխանները փորձում էր գտնել նամակագրութեան միջոցով, կամ հրապարակում էր իր ձեռքի տակ եղած նիւթը՝ սպասելով արձագանգների: Մտաւորական-հոգեւորականը մանաւանդ իր առաջնորդութեան տարիներին կանոնաւոր նամակագրութիւն է ունեցել Պոլսոյ պատրիարքարանի, ժամանակի մտաւորական գործիչների՝ Կարապետ Բասմաջեանի, Վահրամ Թորգոմեանի, Վահրամ արք. Մանկունու, հայր Ներսէս Ակինեանի, Արշակ Ալպոյաճեանի, թերթերի ու հանդէսների խմբագիրների հետ: Պալեանի եւ իր կրտսեր ժամանակակից ու հայրենակից Ալպոյաճեանի միջեւ եղած մինչեւ վերջերս անյայտ նամակները (1905-1913) պահպանում են Մաշտոցեան Մատենադարանում՝ Ալպոյաճեանի թողածներում¹³: Նամակագրութիւնից քիչ բան է պահպանուել՝ միայն միջանի հրատարակումները, իսկ մնացածը ենթարկուել է թալանի եւ ոչնչացման, նրա միւս աշխատանքների, ունեցած ձեռագրերի, հնատիպ գրքերի եւ մշակութային այլ արժէքների հետ՝ 1922ին Զմիւռնիայի յայտնի դէպքերի ժամանակ:

Դպրոցական-կրթական գործին զուգընթաց եւ միաժամանակ՝ Պալեանի յաջորդ քայլը մատենադարանի ու թանգարանի հիմնադրումն էր, որի համար չի խնայել իր անձնական կարողութիւնը եւ. *«ուր զեպեղած եմ ձեռագիր մատենք թուով գրեթէ հարիւր, եւ տպագրեալ գրեանք՝ թուով հինգ հարիւր»*¹⁴: Նա 1891ին գրել է, որ Ս. Կարապետ վանքի նոր գրատունը ունի 100 կտոր գրչագիր, որ հետզհետէ «աւելցնելու փոյթ կը տարուի», աւելացնելով որ պատրաստել է կանոնաւոր մի ձեռագրացուցակ՝ *«հանդերձ յիշատակարանօք եւ մանրամասն տեղեկութեամբք, այն նպատակաւ, թէ մի օր կը հրատարակուի»*¹⁵: 1894ին արդէն մատենադարանն

¹³ Նամակների հրատարակութիւնը տես՝ Կ. Աւետեան, «Տրդատ եպիսկոպոս Պալեանի նամակները Արշակ Ալպոյաճեանին», Էջմիածին, 2006:Ա., էջ 81-91:

¹⁴ Տ. վրդ. Պալեան, Վանք սրբոյն Կարապետի ի Կեսարիա եւ վարժարան ժառանգաւորաց, “Արեւելեան մամուլ”, Զմիւռնիա, 1890, էջ 376-378:

¹⁵ Տ. վրդ. Պալեան, «Ազգային հին ձեռագիրք», Ծաղիկ, Կ. Պոլիս, 1891:32, էջ 3:

ունէր 180 ձեռագիր եւ 1000 կտոր տպագիր մատեան¹⁶: Պալեանը ծրագրել էր Կեսարիայի վիճակի ձեռագրերի նկարագրութիւնը՝ բաղկացած 15 պրակներից, ամփոփել առաջին հատորի մէջ, որից յետոյ պէտք է անցնէր միւս վիճակները եւ վանքերը՝ պրպտելու ձեռագրերը՝ ցուցակագրութեան եւ առանձին հատորներով հրատարակելու համար: Ձեռագրերի առաջին նկարագրութիւնները՝ «Թեմորայք Կեսարիոյ վիճակին եւ ազգային հին ձեռագիրք», Կեսարիայի Ս. Աստուածածին եկեղեցու, Ս. Սարգսի վանքի, Մաղնիսայի (Զմիւռնիայի վիճակ), Ս. Սիոն եւ Ս. Լուսաւորիչ եկեղեցիների՝ նախ հրապարակել է Պոլսի եւ Զմիւռնիայի մամուլում¹⁷, այնուհետեւ՝ առանձին պրակներով, ամբողջական հատորով հրատարակելու յոյսը սրտում պահած: 1903ին արդէն Կեսարիայի վիճակի վանքերում, եկեղեցիներում ու անհատների մօտ գտնուող Պալեանի ցուցակագրած ձեռագրերի ընդհանուր թիւը հասել է 650ի. «Յուցակն առ այժմ մեր քով կը մնայ ձեռագիր, որովհետեւ տպագրութեամբ ի լոյս ընծայելու համար մեր նիւթական կարողութիւնը չի ներեր»¹⁸: Աւելի ուշ, երբ այլեւս մարել էր առանձին հատորով հրատարակելու յոյսը, Ալիսեանի յորդորներին անսալով՝ 1921ին սկսել է մաս առ մաս ուղարկել, *Հանդէս ամսօրեայի* մէջ հրատարակելու համար, սակայն իրեն վիճակուած չէր տեսնել այդ հրապարակումը՝ իրականացած միայն 1959-60ին, «Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի նոր գրադարանի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա» վերնագրով¹⁹: Պալեանից մեզ հասել եւ յայտնի է առայժմ 170 ձեռագրի նկարագրութիւն եւ 10 ձեռագիր, որ եզակի աղբիւր է Կեսարիայի եւ շրջակայքի գրչագրական դպրոցների, ձեռագրական մշակոյթի մասին եւ որոնք գտնուում են Երեւանի, Երուսաղէմի, Նիւ Եորքի, Վիեննայի, Կ. Պոլսի ձեռագրական հաւաքածոներում: Նրա՝ տարբեր աղիթներով ձեռագրերի թուի վերաբերեալ յիշատակումները իմի բերելով եւ ամբողջացնելով ստանում ենք Կեսարիայում գրուած եւ ընթօրինակուած ու չպահպանուած գրչագրերի ընդհանուր պատկերը՝ անելի քան 700 ձեռագրեր եւ դրանց անտիպ նկարագրութիւնները, որոնց կորուստը այլեւս անդարձ ու անփոխարինելի է հայկական մշակոյթի համար:

¹⁶ Տ. վրդ. Պալեան, «Հայ տպագրութեան ամենահին երախայրիք մ'ալ», *Հանդէս ամսօրեայ*, 1894, էջ 357:

¹⁷ Ծաղիկ, Կ. Պոլիս, Ա. Տարի, 1891, հմր. 41 (էջ 1-2), հմր. 47 (էջ 2), հմր. 48 (էջ 6) են. նաեւ՝ *Արեւելեան մամուլ*, Զմիւռնիա, Իէ. Տարի, 1897, հմր. 4 (էջ 127-31), հմր. 5 (էջ 171-74), հմր. 7 (էջ 237-43) են:

¹⁸ Տ. Եպս. Պալեան, «Հետաքրքրական կոնդակ մը», *Քիզանդիոն*, 1903, հմր. 1933, էջ 1:

¹⁹ Հրատարակուել է նաեւ առանձին գրքով՝ *Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա*, կազմ.՝ Տրդատ Եպ. Պալեան, Վիեննա, 1963:

Մեծ վաստակ ունի Պալեանը հայ գրքի, գրատպութեան պատմութեան ուսումնասիրութեան ասպարէզում, նրա այս բնոյթի յօդուածները ցրուած են մամուլում: Նա զբաղուել է հայկական տպագրութեան կենտրոնների՝ Վենետիկի, Զմիռնիայի, Կ. Պոլսի, Լիվոռնոյի, Մադրասի տպագիր գրքի, տպագրութեան պատմութեամբ, կարեւոր ճշտումներ եւ լրացումներ է արել հայերէն առաջին տպագիր գրքի թուագրման հարցերի, հնատիպ հրատարակութիւնների մինչ այդ գիտութեանն անյայտ տեղեկութիւններ պարունակող յօդուածներ: Մամուլում տպագրելով «Անյիշատակ տպագրութիւններ», «Անտիպ յիշատակարաններ եւ անյիշատակ տպագրութիւններ», «Հայերէն հին տպագրութիւնք»²⁰ վերնագրերով յօդուածներ, շատ ուրախառիթ երեւոյթ է համարել Կեսարիայում եւ գիւղերում (Պալականսի, Թալուսուն, Մունճուսուն, Նիրզէ, Ս. Կարապետի վանք) բազմաթիւ հայերէն հին հրատարակութիւնների առկայութիւնը. ոչ-լրի հաշուարկով պահպանուած 22 անուն, այս փաստով եզրակացրել է, որ Ի. դարի սկզբներին արդէն մեծ մասամբ թրքախօս դարձած Կեսարիայի հայութիւնը ժամանակին եղել է հայախօս, գրագէտ, գրասէր ու ընթերցասէր: Ինքն էլ լինելով մեծ գրքասէր՝ ունէր ձեռագրերի եւ հնատիպերի մեծ հաւաքածոյ: Պատրաստել էր հրատարակութեան հնատիպ հայ գրքի մատենագիտութիւն, գործը բաժանել է երկու հատորի՝ Ա.- 1512-1800, Բ.- 1801-1850, ապա լրացնելով հասցրել է մինչեւ 1900:

Կապետ ծածկանունով 1903-6՝ Փարիզի *Բանասէր* հանդէսում հայկական հնատիպ գրքի նրա մատենագիտութեան հրատարակութիւնը, որ արդէն մշակուած, ժամանակագրական դասակարգումով հրապարակումների շարք էր, անաւարտ է մնացել: Հնատիպերի՝ Պալեանի արած նկարագրութիւնները մինչեւ օրս էլ չեն կորցրել իրենց այժմեականութիւնը եւ մատենագիտական հրատարակութիւնների մէջ, մի շարք դէպքերում նոյնիսկ յղում են որպէս աղբիւր՝ պահպանուած միակ յիշատակութիւն-նկարագրութիւն²¹:

1865-78՝ դեռեւս Մաղնիսայում գտնուած ժամանակից սկսած, Պալեանը հաւաքում էր ձեռագրեր, հնատիպ գրքեր, արխիւային նիւթեր, գորգեր, դրամներ, դրոշմանիշեր, կնիքներ: Նա հետաքրքրուել է նաեւ բանահիւսութեամբ. հաւաքել է հեքիաթներ, հանելուկներ, առածներ ու ասացուածքներ, աշուղական երգեր, որի արդիւնքում հրատարակել է երկուա-

²⁰ Հանդէս *ամսօրեայ*, 1894, 1895, 1897, 1922, *Արեւելեան մամուլ* 1896, 1897, *Բիւրակն* 1899, *Բանասէր* 1903:

²¹ Օրինակ՝ Հայ գիրքը 1512-1800 թուականներին մատենագիտական հատորը վերցրել է Պալեանից Պապարագապետի 1568ի արգարեան հրատարակութեան յիշատակարանը, Կ. Պոլսի 1772ի *Այբբէնարան եւ քրիստոնէականի* նկարագրութիւնը:

կան հատոր՝ հայ աշուղներին առաձների ու ասացուածքների²²։ Աշուղների հաւաքածուն Պալեանը կազմել է ձեռագրերից, տպագիր գրականութիւնից եւ բանաւոր՝ անձնական շփումներից՝ աշուղների հետ, հաւաքել է հայերէն, թուրքերէն, պարսկերէն երգեր։ Ամբողջ գործը նախատեսել էր ամփոփել հինգ հատորների մէջ, որի վերջին՝ հինգերորդ հատորում պէտք է գետեղէր իր ինքնակենսագրութիւնը, ամէնայն մանրամասնութեամբ։ Ակնի, Կեսարիայի եւ գիւղերի՝ Էւերեկի, Նիրզէի, Էֆքերէի, Մուն-ճուաունի բարբառներով գրի է առել նաեւ զրոյցներ, հեքիաթներ, հանելուկներ, անտունիներ, օրօրոցայիններ, սիրերգեր, որոնց մի մասը հրատարակել է մամուլում։ Պալեանը հաւաքել է ոչ միայն հայկական բանահիւսութիւն, այլեւ հաւաքել եւ հրատարակել է հայերէն-թուրքերէն ասացուածքների մի մասը, իսկ հայկական հեքիաթների մեծ մասը՝ 120 միւտոր, աշուղների մնացած հատորները, ւելի քան 13,000 միւտոր թուրքերէն առաձների հրատարակութեան պատրաստ ձեռագրերը ոչնչացել են։

Վանքերի մասին իր աշխատանքի աշխարհագրութիւնը բաւական ընդարձակ է՝ Կեսարիա, Սեբաստիա, Եդոնկիա, Ամասիա-Մարգուան, Շապին Գարահիսար, Տիրիկ, Տրապիզոն, Բարձր Հայք, Խարբերդ, Ակն, Արաբկիր, Մալաթիա, Բաղէշ, Մանազկերտ, Մուշ, Եդեսիա, Կիլիկիա, Վան եւ շրջակայք։ Վանքերի շատ նկարագրութիւնների համար անձամբ է շրջել եւ նիւթեր հաւաքել, ականատեսի նրա այս նկարագրութիւնները այդ վանքերի՝ իր ժամանակի կացութեան եւ իւրահատկութիւնների արձանագրումն են, դրանով էլ ստոյգ վաւերագրի արժէք ունեն։

1897-1908՝ *Քիւզանդիոն* օրաթերթում եւ 1906ին *Լոյս* հանդէսում «Հայ վանօրայք», «Նոր ցուցակ հայ վանօրէից», «Յուցակ հայ վանօրէից» վերնագրերով Պալեանը մաս-մաս հրապարակել է վանքերի մասին իր ուսումնասիրութիւն-յօդուածաշարը։ Նախ ըստ տօնացոյցի խմբաւորել է եւ հրապարակել, ապա սկսել է ցանկել ըստ գաւառների։ Նրա գործի կարեւորագոյն արժէքն անձամբ իր հաւաքած կամ թղթակիցներից ստացած եւ այժմ չպահպանուած նիւթի գործածումն է։ Պալեանի նկարագրած այդ վանքերն այսօր մեծ մասամբ չկան, կամ գրեթէ բոլորը ւերուած են, ուստի եւ նրա՝ հիմնականում ականատեսների նկարագրութիւններ պարունակող յօդուածները նոյն վանքերին վերաբերող պահպանուած եզակի վկայութիւններ են եւ սկզբնաղբիւրի արժէք ունեն։ Պալեանի նկարագրած ձեռագրերից եւ վանքերից պահպանուել են միայն նկարագրութիւնները։ Վանքերի մինչեւ այսօր մեզ հասած նրա նկարագրութիւնների թիւը հասնում է 346ի։ Այս գործի առիթով կազմել է նաեւ Անկիւրիայի, Կեսարիայի Ս. Կարապետ, Ս. Դանիէլ, Զմիւռնիայի Ս. Ստեփանոս, Սեբաստիայի Ս.

²² Տ. Եպս. Պալեան, *Հայ աշուղներ. ժողովրդական հայ երգիչներ եւ փառասացք, հյր. Ա. եւ Բ.*, Իզմիր, 1911 եւ 1912. նաեւ՝ Տ. Եպս. Պալեան, *Ժողովրդական առաձներ եւ զանազան ասացուածք. պրակ. Ա. եւ Բ.*, Զմիւռնիա, 1912:

Նշան, Մարգուանի Ս. Աստուածածին, Տրապիզոնի Ս. Ամենափրկիչ վանքերի առաջնորդների գաւազանագրքերը: Ամենաընդարձակ եւ մանրամասն նկարագրութիւն-պատմութիւնը, բնականաբար, Կեսարիայի առաջնորդանիստ Ս. Կարապետ վանքինն է, եւ ամենածաւալունը՝ նոյն վանքի գաւազանագիրքը, որի համար օգտագործել է յիսունի մօտ ձեռագիր յիշատակարաններ, բազմաթիւ արձանագրութիւններ, տապանագրեր²³:

Իր հնագիտական, ազգագրական, ձեռագրական հարուստ հաւաքածոներով Պալեանը երազում էր ծննդավայրում ստեղծել Երուսաղէմի մատենադարանի նման հարուստ հաստատութիւն, մշակութային կենտրոն:

Տրդատ եպիսկոպոս Պալեանի կատարած հաւաքչական աշխատանքները բանահիւսութեան, հնագիտութեան, աշուղական արուեստի բնագաւառներում խիստ կարեւոր են, քանի որ շնորհիւ այդ աշխատանքին այսօր մեզ է հասել Օսմանեան Կայսրութեան արեւելեան նահանգների, մասնատորապէս Կեսարիայի եւ շրջակայքի պատմամշակութային կեանքի համահաւաք պատկերը ԺԹ. դարի վերջերից մինչեւ Ի. դարի 20ականները:

Առաջին անգամ Պալեանն ուսումնասիրութեան նիւթ է դարձրել պատմամշակութային յուշարձաններով այնքան հարուստ Կեսարիան, որ մինչ այդ մի անհասկանալի պատճառով շրջանցուել էր եւ չէր արժանացել որեւէ հետազօտողի ուշադրութեանը: Նա առաջիններից էր, որ հաւաքել ու հրատարակել է՝ փրկելով կորստից բազմաթիւ արձանագրութիւններ, յիշատակարաններ, ձեռագրերի եւ վանքերի նկարագրութիւններ, բանահիւսական հարուստ նիւթ:

Իր գրական գործունէութեան ամբողջ ընթացքում Պալեանը հրատարակել է միայն ինն անուն ոչ այնքան ծաւալուն գիրք, իրենից յետոյ իր թողած ժառանգութիւնից հրատարակուել են եւս երեքը.- *Յուցակ հայերէն ձեռագրաց վանուց Ս. Կարապետի եւ Ս. Դանիէլի ի Կեսարիա* (Վիեննա, 1963), *Յուցակ հայերէն ձեռագրաց ի Կեսարիայ, Զմիւռնիայ եւ ի շրջակայս նոցին* (Երեւան, 2002), *Հայ վանօրայք* (Ս. Էջմիածին, 2008): Տպագիր եւ անտիպ գործերից մեզ հասածը չնչին մասն է այն հսկայական ժառանգութեան, որ կուտակել էր տարիների իր գործունէութեան ընթացքում: Հարկ է արձանագրել միաժամանակ, որ Պալեանի ունեցած անտիպ ուսումնասիրութիւններն ու հաւաքածոները ընդհարապէս չեն պահպանուել, ամբողջը ոչնչացուել է 1922ի Զմիւռնիայի աղէտի՝ թուրքական յարձակման օրերին:

²³ Մայր Աթոռ Ս. Էջմիածնի հրատարակչութիւնը, որպէս Հայրենագիտական Շարքի Ա. հատոր, 2008ին հրատարակեց Տրդատ եպս. Պալեանի *Հայ վանօրայքը*, որտեղ մէկտեղել ենք Պալեանի՝ *Քիզանդիոնում* տպուած վանական նկարագրութիւններն ու նրա 1914ին Զմիւռնիա տպուած մատենագիտօրէն հազուագիւտ *Հայ վանօրայք ի Թուրքիա. Գաղափրոյ, Սեբաստիոյ եւ Տրապիզոնի կուսակալութեանց մէջ եղած վանօրայք* հատորը:

**PRELATE OF CAESAREA, BISHOP TERDAT PALIAN, AND HIS EDUCATIONAL AND
CULTURAL ACHIEVEMENTS
(Late 19TH-early 20TH centuries)**

(Summary)

KARINE AVETYAN (avetyan.karine1@gmail.com)

Caesarea was one of the most populous settlements in the Ottoman Empire. Armenians lived there from the 11th century, when a huge wave of migration caused a demographic shift in the Cappadocia region and the preponderance of the Armenians. In a short time Armenian culture developed and numerous churches and monasteries were built in and around Caesarea, making the region a center for Armenian manuscripts and illumination. The Ottomans occupied the area in the 15-16th centuries. During Turkish dominion, the demographic picture changed gradually as the Turks occasionally evicted and forcibly relocated large numbers of Armenians and Greeks and replaced them with Muslims, or forcefully converted the local Christian population to Islam. This Turkification policy continued until the late 19th century and reached its peak during WWI, when the Armenians were uprooted. Eventually, Kemalism in the early 1920s gave the final blow to heterogeneous Caesarea and ethnically homogenized it.

The paper highlights the role bishop Terdat Palian (1887-1910) played during his prelature in Caesarea in establishing schools, popularizing education, promoting and supporting Armenian culture and disseminating awareness of the graceful past it had had during previous centuries.

